ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի (Կ-308-26.04.2018-ՊԻՄԻ-017/0) վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ԱԺ պատգամավոր Ռուստամ Մախմուդյան**	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկվում է որպես բողոքը չքննարկելու, իսկ բողոքի կապակցությամբ սկսված քննարկումը դադարեցնելու հիմք նախատեսել այն դեպքը, երբ բողոք ներկայացրած անձն այն անհետևանք թողնելու կամ բողոքի քննարկումը դադարեցնելու խնդրանքով դիմել է Պաշտպանին:	**Ընդունվել է**: Նախագիծը խմբագրվել է:	**Ընդունվել է:**
2.	**Կառավարություն**	Նախագծի 11-րդ հոդված	Առաջարկվում է նախագծում կատարել լրացում՝ սահմանելով, որ Պաշտպանի աշխատակազմի պետական ծառայողների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց	Նախագիծը խմբագրվել է:	**Ընդունվել է:**

			իրավունքների պաշտպանության հարցում Պաշտպանին վերապահված լիազորությունների կատարմանն ուղղված գործառույթներ կարող են իրականացվել միայն Պաշտպանի գրավոր որոշման հիման վրա՝ այդ որոշմամբ նախատեսված կարգով և ծավալով՝ նպատակ ունենալով ապահովել Պաշտպանի աշխատակազմի պետական ծառայողների կողմից օրենքով նախատեսված վայրեր անարգել այցելելը և հաշվի առնելով երեխաների իրավունքների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերում Պաշտպանի լիազորություններին վերաբերող կարգավորումների նմանությունը:		
3.	**Կառավարություն**	Նախագծի 12-րդ հոդված	Առաջարկվում է նախագծից հանել Պաշտպանի՝ Կառավարության նիստերին վարչապետի հրավերի հիման վրա մասնակցության վերաբերյալ դրույթը՝ հաշվի առնելով Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների	Նախագիծը խմբագրվել է:	**Ընդունվել է:**

			պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի 15.05.2018թ. նիստում նախագծի քննարկման արդյունքները:		